

ՏԱՍՏԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՅԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի:
Тифлис. Редакция «Маяк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱՆՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Ղալաբից:
Նամակ խմբագրին: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Թիֆլիսից: Արտաքին
լուրեր: — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: — ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ:
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՂԱԼԱԲԻՑ

Մարտի 15-ին

Մարտի 5-ին երկուսու դպրոցայ հոգաբարձու-
թիւնը հաշիւ տուեց ժողովրդին, և որովհետեւ հո-
գաբարձութեան երեքամսեայ ժամանակը լրացել
էր, ուստի ընտրեցին նոր հոգաբարձուք քուէար-
կութեամբ. պ. Ա. Կաճկաճեանցին, որը 12 տա-
րի անխնայ և արդարութեամբ ծառայել է, նոյն-
պէս նոր հոգաբարձուք. պ. Ն. Միշկեան, բոլոր
ի. Միշկեան և Մ. Պիտանեան: Գումարը հնար-
որ նորոնտի հոգաբարձուք, իրանց նախորդ
հոգաբարձուքից աւելի կաշխատեն:

Այս նամակովս մի քանի ուրախելի լուրեր
կամենում եմ հաղորդել «Մշակի» ընթերցողնե-
րին: Ղալաբիցի Գասպար Մամաջանեանը, ընտր-
ված լինելով հասարակութիւնից, որպէս օրիորդ
գլխին տան շինութեան հոգաբարձու, յայտնեց
թողութիւն, որ առձեռն ժողոված ունի 400
թուղթի, և ինքն պ. Մամաջանեանը ընծայում է
մի շքեղ երկխորանի տուն Ղալաբի օրիորդական
ուսումնարանի համար, ուր առաջ դետեղվում էր
Ղալաբի արքունական ուսումնարանը: Այդ ու-
սումնարանը յարմար լինելով օրիորդաց ուսում-
նարանի համար, ունի և մի մեծ դահլիճ, ուր մը-
տալիս են շինելու թատրոն: Գործըրդականը և
հոգաբարձուք իրանց վերո շնորհակալեց յայտ-
նեցին պ. Մամաջանեանցին: Մինք ևս մեր կող-
մից շնորհակալ ենք պ. Մամաջանեանցից, որ
Ղալաբի այդ ճգնաժամին օգնեց մեզ և ընծայելով
ուսում, փրկեց մեր օրիորդներին այն մահաբեր
ցաւերից, որ յաճախ են պատահում Ղալաբում, և
որ բոլորիցի աւելի թողեցին բոլորը ունի
անուանվում: Ինչ տուն էլ ուղէք վարձել օրիոր-
դաց ուսումնարանի համար, անպատճառ ձմեռը
անտանելի ցուրտ է լինում: Բացի օրանից Ղալ-
լաբը կունենայ այժմ և մի մեծ դահլիճ թատրոնի
համար, որին մենք շատ կարօտ էինք: Մենք տե-
ղեկացանք, պ. Գասպար Մամաջանեանցը, վա-
ղաց մտադիր է եղել մի օրիորդաց դպրոց կա-
ռուցանելու, բայց մինչև այժմ, ինչպէս յայտնի է
առջանից, պ. Գրիգոր Աբրահամեանցը խոս-
տալով լինելու պ. Գրիգորի հոգաբարձութեանը և ժողո-
վրդին 6,000 ռուբլի, բայց չը կատարեց իր խոս-
տումը: Բացի դրանից կամենում եմ յայտնել ձեզ
և մի այլ ուրախելի երեւոյթ. մեր ուսումնարանից
և մի այլ ուրախելի երեւոյթ. մեր ուսումնարանից
աւարտած աշակերտ պ. Կիրիկ Սողոմոնեանց, իր
քառամսեայ աշխատութեամբ վատաւարած փողից,
որպէս մեզ ևս յայտնի է, ընծայեց ուսումնարան-
նորին երկու տոմսակ Ղալաբի Մամաջանեան
բանկի 300 ռուբլի արժողութեամբ, որ նրա տո-
մսակով պահվին երկուսու դրոշմով երկու օր-
դակներով աղքատ դատակարարից: Վերջապէս մեր
օրիորդաց ուսումնարանում ձրիապէս ձեռագոր-
ծութիւն է ուսուցանում տ. Թամար Կաճկաճեանցը:
Տիկինը, որպէս մեզ յայտնի է, քանիցս անգամ չը
նայելով զանազան խոնդրոտների օգնել է ձրիապէս
թէ թատրոնին և թէ մարդասիրական ընկերու-
թեան և այժմ ունենալով դեռահաս զաւակներ,
է դադարում օգնելուց: Յայտնեմք որ Ղալաբի
տիկնայից կաշխատեն օրինակ վերցնել նորանից:
Բացի տիկին Կաճկաճեանցից, մեր թատրոնական
բանկը դարձրանք օրիորդ Նովիկեանցի, որ իր առա-
ջին անգամ բնիկ դուրս գալով ամենքին զարմաց-
րեց իր գեղեցիկ խաղով: Շնորհակալութիւն օ-
րիորդին: Մենք չենք յիշում մի առ մի այլ քա-
ղաքներից եկած գեղեցիկ խաղաղողներին թատ-

րոնական բնիկ վրա, ինչպէս վարժուէի տիկին Ն.
Անանեանց և այլոց: Միայն կասենք, թէ թատե-
րասրից, ուսուցչական և այլ խմբերը, ձրիապէս
բարեգործական նպատակով համարեա ամեն տա-
րի խաղացել են և ամենքը ճշգրտութեամբ կատա-
րել են իրանց գործերը:
Լսում ենք որ Մոզդուկի բարերար պ. Գեանջու-
մեանցը աշխատում է վերջացնել օրիորդական
դպրոցը և թատրոնը: Ուրեմն երկու դրացի հա-
յարեակ քաղաքներ կունենան ձրի պատրաստի
ուսումնարաններ և թատրոններ: Ցանկանում եմ
մեր ազգի համար առատութիւն այդպիսի բարե-
բարներին:

Ա.

ՆԱՄԱԿ ԽԱՐԱԳՐԻՆ

Մարտի 16-մարտի

«Մշակի» 31-որդ համարում Պ. Ս. Եղիազա-
րեանց հաշիւ է պահանջում պ. խալաթեանից,
իրեն Գրականական ընկերութեան աշխատանք
զանազանից: Պարտք եմ համարում հրապար-
կել յայտնել, որ արդէն անցեալ 1882 թ. փե-
տրվաբի 14-ին պ. խալաթեանց չը նայելով իր
անդամակցներին խնդրանքին, տուեց իր հրաժա-
րականը և զանազան ընտրութեան ևս հաւանու-
թեամբ պ. պ. Ն. Արեւիկեանցի, Ա. Քալանթար-
եանցի, Վ. Քերիկեանցի, Ն. Շահապուկեանցի,
Գր. խալաթեանցի, Գր. Կալանթարեանցի և Լ. Բեկ-
Յովսէփեանցի: Նոյն օրից գումարի ամբողջու-
թեան համար, որ համարում էր 397 ռ. և 78 կոպեկի,
ես եմ պատահաբանաբար: Իսկ ինչ վերաբերվում
է պ. Ս. Եղիազարեանի առաջարկութեանը—գու-
մարի գործադրութեան մասին—մենք դարձնում
ենք այն կոմպլեքտն ունի և վճարական ձեւին,
որով պարտք հրաւիրում է նախ կ'իւն անդամնե-
րին ըստ քանց տնօրինել գումարը. պ. Ս. Եղիա-
զարեանցի, իրեն իրաւաբան, անշուշտ գիտէ, որ
նախկին անդամները ներկայումս կորցրել են
իրանց անդամակցական բոլոր իրաւունքները:
Դժուար է ենթադրել, որ «Գրակ. ընկ.» ներկայ
անդամները թոյլատրեն իրանց իրաւանց այդպի-
սի մի բռնաբարութեմ:

Ս. Մամիկոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇԽՄԱՀՄՈՒԹԻՒՆ գիւղից մեզ գրում են: «Մեր մէջ
ծաղիկ, կարմիրուկ և բկապաճ հիւանդութիւնները
շատ զոհեր են անում, այնպէս որ օրական զոհ
են գնում այդ ցաւերին 3 մինչև 4 հոգի»:

Նոյն տեղից մեզ գրում են: «Մեր գիւղն ունի
մի ձկնական դպրոց, որ ահա 14 տարի գոյու-
թիւն ունի և որ այնու ամենայնիւ շատ անապա-
հով դրութեան մէջ է»:

ԱՍՏԻՐԱՒԱՆԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Մին-
չև այժմ չէ նշանակված առաջնորդ Աստրախանի
վիճակի համար: Ցայտնի էլ չէ թէ երբ կը նշա-
նակվի: Լուր կար, որ առաջնորդի պաշտօնին վը-
րա նշանակվելու է Պարզեան եպիսկոպոսը, որ
այժմ Նոր-Նախիջևանում է ապրում, բայց մինչև
այժմ չը հաստատվեցաւ այդ լուրը: Ցանկալի է,
որ չուտով նշանակվել մեր թեմի վրա մի եռան-
դորդ բնաւորութեան տէր մարդ լինել, որպէս
զի կարողանար, ի միջի այլոց, քաղաքիս կոն-
սիստօրիայում վերջին ժամանակները կատարված
անկարգութիւններին վերջ տալ»:

Աստրախանից մեզ հաղորդում են թէ ահա մօտ
չորս ամիս է որ ընտրվեցան այդ քաղաքի հայոց
երկուսու դպրոցների հոգաբարձուները և մինչև
այժմ չը միաձայնեց ոչինչ թուղթ չէ ստացվում, ո-
րով նրանք հաստատվին իրանց պաշտօնին մէջ»:

Երէկ, շաբաթ օր, կատարվեցաւ ԹԻՖԼԻՍԻՄ
իշխան Օրբելեանի թաղման հանդէսը: Հանդէսը
շատ փառաւոր էր. ներկայ էին թէ կառավարչա-
կան լաբժը անձինք, թէ զօրքը և թէ ներկայա-
ցուցիչներ այլ և այլ հիմնարկութիւնների, վրաց
խմբագրութիւնների: Բաղմաթիւ ամբոխ ուղեկ-
ցում էր դադարին: Շատերը ամենայայտնի հիմ-
նարկութիւնների ներկայացուցիչներէն պատկեր
էին տանում հանգուցիալի դադարի առջնից,
որպէս զի այդ պատկերները դնեն իշխանի գերեզ-
մանի վրա:

ԱՆԻՔՍՏԱՆԻՐԱՊՈՒՅՑ մեզ գրում են: «Մեր
գաւառում արդէն ձիւները հալվել են, եղանակը
կատարեալ դարձանային է: Շուտով ցանքեր են
լինելու, մի քանի գիւղացիներ ընկել են քաղաքի
զանազան վաշխառուների տններ և կիսովի ցորեն
են հաւաքում ցանելու»:

ԱՍԱՅԻՍՏԱՆԻՐԱՊՈՒՅՑ մեզ գրում են: «Ինչպէս լսում
ենք, Ախալցխայի վրացական և հայկական հայ-կա-
թօլիկների յայտնի վէճի պատճառով, տեղին կա-
ռավարութեան ձեռքով կազմվել է մի յանձնա-
ժողով որ պէտք է քննէ այդ խնդրի հիմնական
կէտերը: Կաշխատենք վերաւսուցել այդ լուրը և
հետեւեալի մասին տեղեկութիւն կը հաղորդենք
պատուական լրագրից»:

Ալեքսանդրապոլի հայ-կաթօլիկներից ոմանք
գրում են, մեզ. «Յատուկ շնորհակալութիւն «Մը-
շակի» առաջնորդող յօդաւանդների համար «Կաթօ-
ղիկական խնդիր» վերնագրով: Հիմա ձեռք թը-
նամքները կը համոզվեն որ դուք թշնամի չէք
«ազգային եկեղեցու», ինչ գաւառութեան և պառ-
կանի այդ եկեղեցին: Աշխատեցէք միշտ ճշմար-
տութեան համար և յաղթանակը ձերն է»:

Չարմանալի են մեր հայերը: Այն, ինչ որ մենք
անգաղար յայտնում էինք հայոց եկեղեցու մասին
«Մշակի» ամբողջ գոյութեան ընթացքում, մասա-
ւանը 1872 և 1873 թվերին, այդ բոլորը նրանք
մոռացել են, և մինչև անգամ մեզ վրա յարձա-
կում էին, եկեղեցու թշնամի մեզ համարելով. իսկ
այժմ երբ «Կաթօղիկական խնդիր» յօդաւանդնե-
րի մէջ աշխատում ենք միայն ամբողջ մեր ա-
ռաջկայ ասածները, նոյն հայերը սկսում են ամեն
կողմից մեզ շնորհակալութիւններ յայտնել, կար-
ծեա թէ առաջին անգամ են լսում «Մշակի» բե-
րանից նոյն մտքերը: Ուրեմն 11 տարի շարունակ
հայերը կարգում էին ու չէին հասկանում: Թող
նորից թերթին «Մշակի» անցեալ տարիների հա-
մարները և կը տեսնեն թէ մենք երբեք չենք շեղ-
վել մեր մի անգամ նախագծված ուղղութիւնից
և անցեալներում շատ անգամ աւելի պարզ ու ո-
րոշ էլ կարողացանք արտայայտել նոյն մտքերը:
Չարմանալի կարծ յիշողութիւն ունեն մեր հայե-
րը: Ահա, օրինակի համար, ինչ է գրում մեզ մեր
բարեկամներից մի Ներսիսից: «Կարգաւոր կաթօ-
ղիկական խնդրին վերաբերեալ վերջին երեք
յօդաւանդները, չեմ կարող չը յայտնել ձեզ իմ ան-
կեղծ, պարզ, որոշ և փրկարար սկզբունքների
համար: Եթէ ես մի օր խնդրում էի ձեզ մեր ե-
կեղեցուն վերաբերեալ խնդիրների մէջ աւելի որո-
շակի յայտնել ձեր մտքերը, այսօր կատարված
եմ տեսնում փախադս լուրը: Մտում է ինձ ցան-
կալ որ այսուհետեւ ևս այդ հոգով և այդ անկեղ-
ծութեամբ շարունակվէ ձեր յօդաւանդները և ես
յոյս ունեմ որ այդպիսով միայն ամենակարգ մի-
ջոցում փշրած կը լինէք ձեր հակառակորդների
դէմքերը, որովհետեւ նորա այլ ևս տարակուսմի-
լու առիթ չունեն որ դուք լուսաւորչական եկե-
ղեցու ամենահարազատ օրդին և անկեղծ բարե-
կամն էք, ուստի և եթէ ազնիւ լինեն, պէտք է
սեղմեն ձեր ձեռքը և ձեզ հետ միասին մշակեն
ձեր յարուցած սկզբունքները, որոց մէջ է իրանց
փառքը, պատիւը և յարատեւութիւնը»:

մի այդ նամակին մենք միայն այս կը պատաս-
խանենք, որ նոյն մեր հակառակորդները, եթէ ար-
դար եղած լինէին 1872 և 1873 և հետեւեալ տա-
րիներում, նոյնպէս պէտք է մեզ հետ միասին
ընթանային, որովհետեւ մենք մաղի չափ չենք
փոխել մեր ուղղութիւնը, որ և կը տեսնեն, երբ
մենք այդ հարցի վրա մեր տառ տարվայ բոլոր
առաջնորդող յօդաւանդները միասին կը հրատարա-
կենք. բայց ով որ անարդար էր 1872 թվին, մի-
թէ նոյն մարդուց կարելի է պահանջել որ նա
յանկարծ արդար դառնայ 1883 թվին:

Մայրաքաղաքի լրագրիները հաղորդում են, որ
կովկասեան տրանզիտի հարցը այս օրերս կա-
ռավարվի պետական խորհրդի քննութեամբ: Աչ-
քի առջև ունեւորվ տրանզիտի աղբեղութիւնը օ-
տար ապրանքների կոնտրաբանդային առևտրի
զարգացման վրա և այն վնասը որ այդ առևտուրը
հասցնում է ուսաց արդիւնաբերութեանը, զի-
տաւորութիւն կայ, նախ, աւելի ոյժ տալ մեք-
սային վերահսկողութեանը և բազմացնել տա-
մանազնի վրա գտնվող պահպանների թիւը, իսկ
երկրորդ աչքի առջև ունեւորվ այն հանդամանքը որ
Բաթում-Սամուր-Զեմա և Բազում-Թիֆլիսեան եր-
կաթուղիները, որոնք անընդհատ ընկալին ձա-
նապարհով միացնում են կասպեան ծովը Սև ծովի
երկու նաւահանգիստների հետ, կը հեշտացնեն և
կէփանցեն օտար ապրանքների հասցնել տրան-
զիտային ձանապարհով Անդրկովկասի միջով, ա-
ռաջարկում է սահմանել մի նշանաւոր մաքսա-
յին տուրք օտար ապրանքներից, որոնք մրցում
են ուս արդիւնների հետ և աւելի փոքր մաք-
սային տուրք այն օտար ապրանքներից, որոնք
չեն մրցում ուս ապրանքների հետ: Այդ միջոց-
ներով հնարաւոր է գտնված համեմատ ցանկացած
նպատակին, որ ուս ապրանքների հասցնելը
Պարսկաստան և Միջին-Ասիայի վաճառանոցները
աւելի էփան նստէր ուս վաճառականներին և
արդիւնաբերներին, քան թէ օտարներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱ ԹԻՐՔԻՍՏԻՑ

Կ. Պոլիս, 13 մարտի

Ուրբաթ օր, 11 մարտի, գումարեցաւ Ազգ. Ժո-
ղովը: Ներկայ էին քան և հինգ երեսփոխաններ:
Կատեւակներ պ. Բերեքեան: Ներկայ էր պատ-
րիարքը: Մրբազանը շատ դժգոյն, շատ նիհար էր
և բաւականին աւելի տխուր: Գործընդմիջ
գործն էր վաւերացնել հին նիստերու ատենագրու-
թիւններ. անցեալ հոկտեմբեր-նոյն ամիսները եղած
նիստերու ատենագրութիւններն դու տուրած
պատրաստ չէին: Երեսփոխաններին ոմանք սկսան
դանգով: Ատենագրութիւնները պատրաստ են,
տատանակութիւնները պատրաստ են, և
տպագրիչը ստակ կուղէ որ յանձնէ: Երբեք չորս
օսկի պէտք է: Այս պերճախօս պատասխանին
վրայ լռեցին ամենին շատ պոռագողները: Ասկէ
վերջը քանի մը երկրորդական գործողութիւններ
կատարեցան: Պարտիզակցի վահան վարդապետ
այ հրաւիրեցին գալ իր աթոռը բազմել: Այս վար-
դապետը երեսփոխան ընտրուած էր եկեղեցական-
ներու կողմէն. լրագրիներին ոմանք շատ ջանա-
ցին որ չը վաւերացուէ: Կրօնական յանցանք ունի
ըսին, արդարապէս. քաղաքական յանցանք ունի
ըսին, արդարապէս. վերջը մտածեցին ստեղծել
ուրիշ տեսակ մեղքեր, չը յաջողեցան: Այս վար-
դապետը Հայաստանի վրայ շատ տեղեկութիւններ
ունի, եկեղեցականներու վերո պաշտպան, բաւա-
կան ալ ախորժիկի կերպով կը խօսի, բայց իր
չափը չը գիտէր, խնդրով բաներ կընէ, և թորէն
սրբազանի նման եկեղեցականաց ալ անվայել և
զանապաղ դարան կը լարէ:


Այս օրուան կնճառա հարցերէն մէկն ալ Մը-
նակեանի խնդիրն էր: Մնակեան մօտ 80,000

—«Daily News» Երասրի փարիզի թղթակիցը հաղորդում է, որ մարտի 23-ին Վիլյամսը Հիլզոնի աստաղարկեցին ստորագրել խնդիրքը Իշխան կապուսիկին արձակման մասին: Այդ խնդիրքը դրված է Ֆրանսիական և անգլիական լեզուներով և ստորագրված է Սուլդերսինդը, Ֆրիդերիկ Գարրիսոնից, Ջոն Մորլեյից, Ջեյմս Պեննից և անգլիական ուղիքի գիտնականներից: Այդ խնդիրքը ներկայացրեց Վիլյամսը Հիլզոնի Պոլ Մեհրտ, Ֆրանսիական անգլիկոսության անդամ Պալեոսին, և յայտնի եղիլու տառաջ Լուի Լեռուսի և ուղեկիցների ներկայությամբ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ե Ր Կ Ա Ք Է

Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն



Մ Ա Հ Ա Ս Կ Ա Ն Ե Ր

Մի հարկաւ համար 8 լուրջը, երկու հարկաւ համար 14 լուրջը, մահճիւններ ծովային խոտով լցված 6—9 լուրջը, ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԻՋՆԵՅԻ տեղը մեծ քանակութեամբ ԱՄՆԱՆԵՐ, զանաւորներ պատառաքանքներով երկաթէ գրիշներ, կողպէքներ, թիւեր, տղամարդկերանց և կանանց թԱՄԲԵՐ, մատուցարաններ, ՎԼԵՆԿԱ, լէվոլիւներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալբոմներ, կոնֆէկաներ, թէ՛ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղը:

47—100

ԴՈՒՐՍ ԵԿԱԻ ՄԱՄՈՒԼ ՏԱԿԻՑ

ՊԸԼԸ-ՊՈՒՂԻ

Գրեց Մ. Վ. ԲԱՐՈՒԴԱՐԵԱՆՑ: Գինն է 1 լուրջ: Ծախվում է բոլոր դրամադանոցներում:

5—5 (1)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՅԻ ԹԵՅԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՌ ՓՈԳՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԹՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԵԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէ՛

1 լուրջ 10 կ. թէ՛ չէ՛ տալիս 1 լուրջ 30 կ.	
1 " 20 " " " " " 1 " 60 "	
1 " 40 " " " " " 1 " 90 "	
1 " 60 " " " " " 2 " 20 "	
1 " 80 " " " " " 2 " 50 "	
ամենալաւը 2 լուրջ " " " " 3 " —	

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօխարդի և կահաօֆրայ էսենցիայի, Պալմերի բիսկիտների, Բազլի կոնֆէկաների, Նեֆելի դանակների, Տուրնելի գրիշների, Գաուի հրացանների, Վեկիլի լէվոլիւների, Բարնսի թամբերի, Մեկիլի ամանների, Կոլմանի կրակմալ և մանանեխ, Շվարցի ալբոմներ և այլն և այլն:

83—100

Յգազրութեամբ լցն տեսաւ

ՈՒՍՈՒՅԻՉ

ՈՒՍՍԱՑ ԼԵՋՈՒԻ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Հայոց ուսումնարանների համար. յորինեց Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

„Учитель русскаго языка.“

Այս գրքի մէջ կան ուսուցիչներին դեղագրութեան օրինակներ, երգեր, փոքրիկ և թիւի հատուածներ:

Գինն է 20 կ.—գումարով 16 կ.

Վաճառվում է Վ. Կապազսկ. книжн. торговлѣ Зах. Григурова въ Тифлисѣ.

7—10

Մի ԳԵՐՄԱՆՈՒԹԻ ՏԻԿԻՆ որ այժմ թիֆլիսում է ապրում, կը ցանկանար ուղեկցել մի ընտանիքի դէպի արտասահման: Համաձայն է նոյնպէս մի հիւանդին ուղեկցել Տիֆլիսը խօսում է ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵ ՐԷՆ և ՌՈՒՍԵՐԷՆ լեզուներով:

ДАМА немка, приѣхавшая изъ за границы и проживающая теперь въ Тифлисѣ, желала-бы сопровождать семейство или больного отъѣзжающихъ за границу. Говорить по французски, по немецки и по русски.

Адресъ въ редакціи газ. „Мшакъ“
Հասցէ. „Մշակ“ խմբագրատանը:

ԳԼՈՐՈՒՄԻ ԳՐԻՉՆԵՐ

Որոնցով կարելի է գրել ամենակարգիւ թղթի վրա:

Միակ գործակալ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ տեղը կան ամեն ինչ համար մեծ ԳՐԻՉՆԵՐ էժան քան թէ նոյնպէս թԱՄԲԵՐ, ներ, զմուռ, ՄԱՐԻՇՆԵՐ, պենալ, ներ, ծխախոտի ներ, ածելիք, և ներ, ԲԱԶԱՍՏՈՒՐԱՐԸՎՈՒ կակետէ ՏԻՆԵՐ, վազօտի



լուրջն ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ տեսակի ձեռագրութեամբ ամեն ձեռք 25% ուրիշ տեղ: Կան թուղթ, տետրակ-ՏԻՆԵՐ, քարեզ-ԳՐԱԿՈՒ, քսակ-ամաններ, ՄԻԿԱՏ-րոցներ, խալիչա-ՄԱՀԱԿԱՆ, վե-համար իրեր, ԳՈՆԵՐ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, բրիտանական մետաղից իրեր, ԼԱՊՏԵՐՆԵՐ, զգալներ, ԲԱԺԱԿՆԵՐ, ջրամաններ, երես լուսնալու ամաններ, ֆիլտրա, կրան, շիֆոններ, սպիտակ մկրասներ, շորի շէֆօտակ, գլխի, երկաթէ թիւերից, ձիւ համար: Մա-կենաօջներ: Բժշկական թուղթ վատերկրողե-տի համար և այլն և այլն:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ

10—100

ВЪ РЕДАКЦИИ
„МШАКЪ“
ПРОДАЕТСЯ БРОШЮРА
НА РУССКОМЪ ЯЗЫКѢ
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМІЯНЪ“
ЦѢНА 25 копѣекъ.
Соч. Григурова

Բ Ա Յ Ֆ Ի

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ԽԱԶԱԳՈՂԻ

ՅԻՉԱՏԱԿԱՐԱՆԸ

ԱՌԱՋԻՆ և ԵՐԿՐՈՐԻ ՄԱՐԸ

Գինն է 1 լուրջ 20 կ.

Վաճառվում է

„Մշակ“ խմբագրատանը, — „վերտո-նական գրավաճառանոցում“ — Կովկաս-անի գրավաճառանոցում — Կ. Շահ-վերդեանի պալատի մէջ — Կ. Շահ-հիւանդի և Տեր-Յովսէփեանցի ծխա-խոտի մազաղիններում:
Օտարաբարաբացիք կարող են դի-մել այս հասցեով:
ВЪ ТИФЛИСѢ. Редакція „МШАКЪ“
Меликъ-Анопиану.

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ Պարսկաստանի ՌԱՇԸ քաղաքում ԱՌԵՏԲԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ: Ով կը ցանկանայ մեզ դիմել, պատրաստ ենք ընդունել և կատարել ճշգրտեամբ ին առևտրական գործ և լինի ՀԱՐԻԻՐԻՆ ՄԷԿ ՎԱՐՁՈՎ:

Իվան ԻՍԱԿՈՒԼԵԱՆՑ Եռլեցի:

1—5

Փ Ա Ր Ի Ջ Ի Ա Պ Ր Ա Ն Բ

Պատիւ ունիմ յայտնելու յարգելի հասարակութեան որ նորերումս ստացայ ՓԱՐԻՋԻՑ ամենայն տեսակի ամենաբարձր ԱՄԱՐԱՅԻՆ ՄԱՀՈՒԳՆԵՐ և ՏՐԻԿՈՆԵՐ: Պատուէրները վերցվում են չափաւոր գնով և կատարվում են ՓԱՐԻՋԻՑ ՎԵՐ-ՋԻՆ ՄՕԴԱՑՈՎ ամենաճշգրտ կերպով: Խանութն գտանվում է Սոլոյակի, Գանդի-սկայեա փողոց, տուն Շահնազարովի:

ԳԵՐԱԿԱ Ա. ՏԵՐ-ՅԱԿՈԲՈՎ

3—5

Մ. Ն. ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՀԵԱՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈՒՉԵՍԿԱՅԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆՆ ՏՈՒՆ № 13

ՎԵՆԵՍԱՅԻ ԿԱՐԱՍԻԲ, զանազան աթոռներ 35 լուրջըց գիւժիւր, բազկա-թոռներ 6 լուրջ, գիւժիւրներ 12—25 լուրջ, կաշեյի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ, ճանապարհի մահճակալներ, պա-հարաններ, ծալիղ սամփարներ: Չեմօզաններ 2 լուրջ 75 կ.—26 լուրջ, սակի-յաժ ձեռքի և ուսից կակետէ, ճանապարհի սոււղաներ, ճԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԱԿԵՐ 5 լուրջ 50 կ.—30 լուրջ:

Սամփարներ, խոհանոցի պղնձէ ամաններ, կոֆէյի, թէ՛ յամաններ, ութո-ներ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒՍՆԱԼՈՒ ՄԱՐ-ՄԱՐԻՐԵՆ ամաններ 40 լուրջ, երես լուսնալու պղնձէ և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 լուրջ, սոււղանի հայելիներ 2 լուրջ 40 կ.—13 լուրջ, զանազան մետաղների մամակներ 1 լուրջ—15 լուրջ, սեղանի զգալներ 4 լուրջ 50 կ.—1 լուրջ, թէ՛ յի զգալներ Ֆրաժիէ, մէլիօրի, լիհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ, զանազան պատառաքանքներ 2 լուրջ—26 լուրջ:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՕՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հոփանցների կանանց և մարդկերանց, ուսական և անգլիական պողպատէ և երկաթէ զանազան, յայտ-նի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպէքներ 10 կ. և աւելի:

ԲԵՎՈՂՎԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 լուրջ 50 կ.—35 լուրջ, պատրոններ լէվոլիւ-ների համար, հրացան 6 լուրջ և աւելի, զանազան վեշալիաներ, կշիռներ: Անդ-լիական և ամերիկական կշիռներ 50 կ.—2 լուրջ արշինը:

Մշտապէս ունեւ 10,000 Ֆ. թէ՛ Պապով եղբայրների, կաֆէ ՄԻՆԵԼԻՍՈՒԻ թէ՛ յի համար խմորեղէն էյնեմի, ՐԷՏԵԳԱՐԻԻ սիգարաներ, հոտաւէտ ջուր (Օղբ-կոյն) ծխիղ փաշիք, պուզրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էժան քան թէ ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ դարձնալէ յի զանազան ԱՊՐԱՆԵՐՆԵՐ, ծխախոտի արկղ-դրամարկղ, քսակներ, սանդղներ, շապիկներ, լայիկ ձեռնոցներ կանանց, գինու-րական գամշի ձեռնոցներ, դարուս, թիւեր, բրոնզի և մարմարի թանաքաման-ներ, միւրամաններ, գրիշներ, մոտիաներ, գրչակներ, սուրղուչ, փոստի թուղթ, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գի-նու և զեղատան աղանդների համար, նոյնպէս և ուրիշ առարկաներ:

Վերե յիջված բոլոր առարկաները ունեւ մեծ քանակութեամբ և ստանում են ԱՐՍԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առևտրականներին զիջում և առանձին պայմաններ:

Օտարաբարաբացիք կարող են դիմել. Թիֆլիս. Մ. Ն. ԵՐԵՆԻԿՈՑՈՅՈՎ

7—100

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադար-ձնող: Գինը 2 լուրջ: ՓՈՍՏԱ-ՅՈՎ ուղարկված 2 լուրջ 49 կոպ-ԱՆԳԼԻԱԿԱՆ խանութի մէջ



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻԿ, մազերը ամրացնելու-մար, 1 լուրջ ամանը և յիջին յաւի դէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն:

3—100

ԳԱԼԵՐԵԱ ԱՐԹՐՈՒՆԻ, ԳՎՈՐՅՈՎԱՅԱ ՓՈՂՈՑ

ՊԱՀԵԱՍ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, ՎԻՆՆԱՅԻ ԹՕՆԷՔ ֆար-րիկայի ՄԵՐԵԼԻ ամեն տեսակի, նոյնպէս ՈՍԿԵՉՈՎ ՇՐԱՆԱԿՆԵՐ հայելիների հա-մար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱՐԹՐՈՒՄԻ թուղթ, ԲԷԶԻՅԻ ԱՊԱԿ-ՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՐՈՆ քար, ԹՈՒ-ՋԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմալով, ՆԻՐԱՔ ԴԱՐՁԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ ապրանքներ: